

Թաւր որիկայի իմացեալ զգալուստ Վեհափառ Կաթուղիկոսին, զյաջող գէղս գտեալ յարձակեցան յափշտակութեան տղագաւ ի Հաղբատ, և եթէ հնար ինչ իցէ ունիլ զկաթողիկոսն Նփրեմ և ածել առ արքայորդին Պարօից Արբաս - Միրզայ, բայց Հաղբատեցիք արիաւար զգէմ կալեալ յարձակմանց նոցա՝ դարձուցին զնոսա ի փախուստ. այլ անիրաւքն ի փախստեան իւրեանց յարձակեցան ի վերայ սեպհական գիւղին Հաղբատայ վանից Մաւրջայ աւերեցին, և զբազումս ի բնակչաց վարեցին ի գերութիւն:

Յաւարտ վիտառանական անցիցն տեսանի առաւել քան զամենայն հնութիւնս, որք գտանին ի Հաղբատ, թէ օրհնութեամբ և թէ շքեղութեամբ գերազանցութիւն աշխարհահայտի վանիցն Հաղբատայ յանուն Սուրբ Նշանի. զորս արդար և արժան է մանրամասն նկարագրել, զնելով կարգ ընդ կարգի ի ստորեւ դարձանագրութիւնս իւրաքանչիւր եկեղեցեաց համեմատ բուն և գեռ և անջինջ փորագրեալ արձանացն:

(Եւրոպական Գրականութիւն):

Ռուստամ Բէկ Նրդնկեանց:

ԲԱՆԱՌԻՐԱԿԱՆ

ՀՐԵԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍԻ ՕՐԵՐՈՒՄ:

(Եւրոպական Գրականութիւն, Արեւելի Բ. Թ.)

Պանդոսիւս Հրեաների խաղաղական և կրօնական կեանքը աւելորդաբար նոցա միւսներէն ալ յայտնի է յայտնի, որ «նշան հանդէս» Փրիւի վերայ:

Միայն տերութեան մայրաքաղաքում բնակուող հրեաները չէին, որ վայելում էին հոգովեական քաղաքացիութեան իրաւունքը, այլ միւսնոյն արտօնութիւններով կարող էին պարծենալ և Փոքր Ասիոյ շատ հրեաներ, Ասորիքի Սելեւկեան շատ տեղերում նոցա միւսնոյն արտօնութիւններն էին պարզեւել, Այդ պատճառով նոքա շատ տեղերում երկօրինակ իրաւունքներ ունէին, — մէկը հոգովեական քաղաքացիութեան, միւսը ասիական քաղաքացիութեան իրաւունք և արտօնութիւն: Առաջին տեսակի իրաւունք վայելողները կարող էին իւրեանց քաղաքական վարչութիւնն ունենալ՝ իւրեանց կողմից ընտրուած արքունտի տեսչութեան տակ և ըստ ամենայնի ա-

ղատ էին և անկախ այն քաղաքի իշխանութիւնից և դատարաններից, որի մէջ ընկալուած էին, դորա համար կարելի է ցղց տալ Սարգիոյ, Եփեսոսի, Գեղոսի և ինչպէս երևում է՝ Անտիոքի հրէաներին, Բայց՝ իրաւամբ թէ անիրաւացի՝ նորա պահանջում էին ինքնավարութիւն ունենալ, ինչպէս և ստանում էին, բացի հալածանքի ժամանակից, Մի քանի տեղերում նորա ստացել էին Ասիոյ քաղաքացիութեան իրաւունքներն այն չափով և այն սահմանով, որոնք տրուած էին նոցա հեթանոս քաղաքացիներին, Այս օրինաց և իրաւասութեան երկուութիւնը կարող էր մեծ խառնաշփոթութիւն յառաջացնել, եթէ հրէաներն ինքեանք յօժարութեամբ չը հնազանդէին իւրեանց սեպհական արիւրուններին *) :

Իսկապէս նոքա աւելի կրօնական ազատութիւն և հասարակական արտօնութիւններ էին վայելում, քան կարծւում է, Այն թողաւորները որոնք քաղցր հայեացք ունէին Իսրայէլի վերայ, իւրեանց նուիրարաշխութիւններն առատաձեռնում էին Երուսաղէմի տաճարին և զաւառական ժողովարաններին՝ իհարկէ ժամանակի ոգւոյն համաձայն, Տաճարի հոյակապ սրահը զարդարուած էր այդպիսի ընծայարարութիւններով, Յայտնի է, որ Պաղոմանք յաճախ թանկագին ընծաներ էին տալիս, Սաղիան Հերովդէսի դաշնակցութեամբ Երուսաղէմն առնելուց յետոյ ոսկեայ պսակ ընծայեց, Օգոստոս և իւր կինը թանկագին անօթներ ընծայեցին տաճարին, Թէև այս կայսրը գովումէր իւր թոռան, որ Եգիպտոսից Սիրիա զնալիս չայցելեց Երուսաղէմին, սակայն ինքը մեծ պաշար էր պատրաստել տուել, որ այնտեղ հանապազօրեայ զոհարերութիւն կատարուի, որն ընդհատուեցաւ միայն այն ժամանակ, երբ վերջին պատերազմը յայտնուեցաւ Հռոմի դէմ, Երուսաղէմի տաճարի մէջ կար « սրահ հեթանոսաց », որ ունէր գեղեցիկ և ճարտարարուեստ նկարներով զարդարած մարմարոնեայ որմ, նորա վերայ ամրացած էին տախտակներ, որոնց վերայ լատիններէն և յունարէն պա-

*) Հին Հռովմում արիւրուն էին անուանւում այն անձինք, որոնց ընտրում էին պլեբէյները, որ իւրեանց իրաւունքները պաշտպանեն պատրիցիների դէմ, Պլեբէյ էր անուանւում հին Հռովմէական ստորին դասակարգին պատկանող անձը, որ ոչ պատրիցիների, ոչ քաղաքացիների եւ ոչ հեծեկազօրի դասակարգին էր պատկանում, Պլեբէյները հետզհետէ մի եւ նոյն իրաւունքներն ստացան, ինչ որ պատրիցիներն ունէին, Երբսրդ դարու կիսին այս դասակարգերի մէջ միայն կոչման զոնադանութիւնն էր մնացել, — Պատրիցիներն էին հին Հռովմի բարձր դասակարգը, որին պատկանում էին Հռովմէի եւ նորա յաջորդների սենատոր ընտրած անձանց սերունդները, Պատրիցիները մեծ առանձնաշնորհութիւններ էին վայելում, նոքա տէրութեան մէջ Իրկար ժամանակ մեծ-մեծ պաշտօններ վարեցին, Կոքա չէին ամուսնանում ուրիշ դասակարգի անդամների հետ, Այս դասակարգը հետզհետէ վերջացաւ, իսկ Գ. դարում նոքա այլ եւս գոյութիւն չունէին, Կոնստանդին կայսրը նորից պատրիցիների տիտղոսը հաստատեց եւ շնորհեց այն անձանց, որոնք նշանաւոր ծառայութիւններ էին արել տէրութեանը, այդ տիտղոսը տալիս էր հեռուոր նահանգների կառավարիչներին եւ յետոյ էլ գերմանական մի քանի դորապետների:

տուէրներ էին գրած, որով հեթանոսներին նախազգուշացնումէին շատ յառաջ չըգնալ տաճարի մէջ, Այդ տախտակներից մէկը նոր ժամանակներումս էին հանել հողի տակից, Գա ապացոյց է, որ այդ սրբավայրն այցելումէին և բազմաթիւ ոչ — հրէաներ, կամ Գոմսէփոսի ասելով, այդ սրբավայրը վայելումէր երկրի վերայ գտնուած բոլոր սղգերի յարգանքը:

Գոմսէփոսի խօսքերով՝ Սիւրիայում բնակւումէր հրէաների ամենամեծ քաղմութիւն, որոնք լաւ ընդունելութիւն էին գտել, Անտիոքում նոցա իրաւունքներն ու արտօնութիւնները գրուած էին պղնձեայ տախտակների վերայ, Ասիայի մայրաքաղաքը հրէաների ամենասիրելի պատսպարաններից մէկն էր, Այստեղ հարկաւոր է յիշել, թէ նա ինչ նշանակութիւն ունէր քրիստոնէական եկեղեցու կանխագոյն պատմութեան մէջ, Անտիոք պետութեան երրորդ քաղաքն էր համարւում և գտնւումէր բարբուռների «Սիւրիա» անուանած տեղի սահմանի յետեւ, որ սուրբ երկիր էլ էր անուանւում, Նա, ի թէ կարելի է այսպէս ասել, Պաղեստինի և հեթանոս աշխարհի առջաւոր պահակատեղին էր, Նորա գլխաւոր ժողովարանը մի դեղեցիկ, հոյակապ շինութիւն էր, որին Անտիոքոս Նպլիւսի յաջորդը յանձնեց այն բոլոր կողոպտած հանդերձանքը, որ այդ կայսրը բերել էր տաճարից, Երուսաղէմի ու Անտիոքի յարաբերութիւնները շատ սերտ և մտերմական էին, Այս քաղաքում կատարուած ամեն մի գործի վերայ հրէից մայրաքաղաքի մէջ մեծ ուշադրութիւն էին դարձնում, Նորա մէջ տարածուող քրիստոնէութիւնը պէտք է որ Երուսաղէմի մէջ մեծ զայրոյթ պատճառէր ամենին, Թալմուդից խմբումներ, որ այնտեղ ուղարկուեցան երեք գլխաւոր բարբի, որ քրիստոնէութեան տարածումն արգելին, Պարսիկների և քրիստոնէաների մէջ պատահած կրօնական վիճարանութեանց մասին գրաւոր տեղեկութիւններ կան, Սակայն պէտք է ճշմարտան ասել, որ Անտիոքացի հրէաները կատարելապէս հելլենացած մարդիկ էին, Մի նշանաւոր ռարբի նոցա մէջ Նսթերի գրքի պատճէնն անգամ չըկարողացաւ գտնել (երբայական լեզուով գրուած), որի համար ստիպուած էր գրել այնքան, որքան իւր յիշողութիւնը կարող էր նորան ջանել այդ բանն տեսնել, որպէս զի ժողովարանում գործածէ, Այս սահմանակից քաղաքը, ուր լիքն էին Երուսաղէմի հետ սերտ կապեր ունեցող հելլենականներ, ամենայարմար տեղն էր, որ ծննդավայր լինէր «Քրիստոնեայ» անուան, ուր առանձին առաքելական պաշտօնով ուղարկուեցաւ «առ հեթանոսս» մի այնպիսի անձն, որպիսին էր Պօղոս առաքեալը:

Թէև հրէաներն արտօնութիւններ ստացել էին, բայց պատմութիւնն էլ համարեայ անընդհատ փաստեր է յառաջ բերում հաստատելու, թէ ամեն մի հասարակութիւն, որոնց մէջ բնակւում էին հրէաները, աշխտաւոր էին զրկել նոցա ոչ միայն առանցնաշնորհութիւնից, այլ և այն իրաւունքներից, որ տրուած էին նոցա այլ մարդկանց շարքում, Այս թշնամութեան պատճառներից գլխաւորն էր այն հակառակ դրութիւնը, որ կար հեթանոսութեան և ժողովարանի մէջ, Հրէին սաստիկ արգելուած էր միանալ կամ մերձանայ

այլացել մարդկանց, — «Պուք ինքնին գիտէք, որպէս անմարմէ առն հրէի հպել կամ մերձանալ առ այլադգի»։ Հրէան միշտ պարծենում էր իւր ծագումով, հաւատով ազգային արտօնութիւններով և լուսաւորութեամբ, որ պարզ երևում է Պօղոս առաքեալի աննարկութիւնից որ ասում է. — «Ապա եթէ դու հրէա անուանեալ ես և յեցեալ ես յօրէնսն, և պարծիս յԱստուած, և գիտես զկամս նորա, և ընտրես զլուսն և խրատեալ ես յօրինացն. վստահ ես յանձն քո առաջնորդ լինել կուրաց լոյս խաւարելոց, խրաւիչ անզգամաց, վարդապետ տղայոց ունել զկերպարանս գիտութեան և ճշմարտութեան օրինացն, Իսկ արդ՝ որ ուսուցանես զընկերն, զանձն քո ոչ ուսուցանես, որ քարոզես չը գողանալ՝ գողանաս. որ ասես չը շնալ՝ շնաս, որ դարչես ի մեհենաց՝ զսեղանս կողոպտես, Ար օրինօքն պարծիս՝ յանցանել ընդ օրէնսն զԱստուած անարդես, Զի անուն Աստուծոյ վասն ձեր հայհոյի ի մէջ հեթանոսաց, որպէս և զրեալ է»։ Փիլոն և այլք միաշունչ ճանաչում և խոստովանում են հրէի բացարձակ դերպանցութիւնը, թէ և ամեն որ իւր հասարացութեան համաձայն, Հրէին շրջապատող ժողովուրդը տեսնելով նորա յառաջագիմութիւնը, նախանձում էր վերան, նախանձումէր երր նրկատում և զգում էր, որ հրէան չորս կողմից ապահով կացութեան մէջ է գտնվում, որ վաճառականութիւնը, տաղանդն ու դրամը անբաժան ընկերներ են նորան, նոցա շրջապատող ժողովուրդը միշտ հարցանում էր ինքն իրան թէ ինչո՞ւ համար այս պանդուխտ համայնք ամենայն տեղ պէտք է քաղաքացիութեան իրաւունք ունենար և միևնոյն ժամանակ ազատ լինէր շատ պարտականութիւններէ, Ինչո՞ւ ինչ պատճառով միայն նոցա պէտք է թող տրուէր ազգային ճարտութեան և հարստութեան մասն արտահանել և տանել Երուսաղէմ՝ իւրեանց սնահաւատութեանը զոհելու, նախանձում և ատում էին նորան, որովհետեւ հրէան երբէք չէր հետաքրքրվում ո՛չ Ափեսոսի մեծութեամբ, ո՛չ Սորնթոսի գրաւիչ գեղեցկութեամբ և ոչ Աթէնքի նշանակութեամբ, նորան հաճելի էր միան և շատ ցանկալի տեղական պայմաններէ իւր օգուտն ու շահը դուրս կորզել, նա իւր հոգու խորքից արհամարհում էր իւր շուրջը կատարուած ամեն բան և կարօտում էր միայն հանգստութեան և հովանաւորութեան, որ իւր գործն ու պարապմունքը շարունակէ. նա էլ ինչո՞ւ պէտք է համակրէր այն ունայն վէճերն ու մեքենայութիւնները, որոնք ալեկոծում էին յունական քաղաքների անհանգիստ ժողովրդին. նա չէր խառնրվում նոցա ազգային ժողովների ազմակից Նիստերին և վիճաբանութիւններին, որովհետեւ հրէաները գիտէին և հասկանում էին, որ իրանք պանդուխտ էին օտար երկրում, դորա համար էլ հաւատարիմ հպատակութիւն էին ցոյց տալիս տիրապետող իշխանութեանը, որի համար արժանանում էին թաղաւորների և կեսարների հովանաւորութեանը, Ասկայն այդ իսկ էր պատճառը, որ նոցա դէմ զրգուում էր ամբոխի առեւելութիւնը։

Այս տարագիր ժողովրդի ցրուած անդամների միաւորութիւն ու մի մարմին կազմելը պատմութեան մէջ ներկայացնում է միակ վաստ և միակ օրինակ իւր անսակում, որի իսկական բացատրութիւնը պէտք է որոնել աւելի բար-

ձրոյ Աստուածային ազդման մէջ, նոցա միաւորող կապերն էին — ԸՔԴ-
ն-ը հոգիները ԸՔԴ-ները Էկեղեցի, ԸՔԴ-ները Էկեղեցիէն ԸՔԴ-ները Եւ ինչ-
-ն-ը Էկեղեցի:

Աւր էլ պանդուխտ էր Տրեան, որքան էլ որ տարանջատ ապրէր իւր եղ-
բայրներից, ի վերայ այսր ամենայնի Միաստուածութիւնը, Մոխէօի աստուա-
ծառաբեկութիւնը, Հին կտակարանի հեղինակական բարձր նշանակութիւնն ու
կարեւորութիւնը բոլոր Տրեանների համար հաւատի անհրաժեշտ մասերն էին
կազմում: Պուրէ հեղինական Տրեան, որ ապրում էր թշնամի, բռնապետի
և կոպիտ ժողովրդի մէջ, չը հոգար իւր տան ու դրան սիւնների վերայ մուտ-
քի աջ կողմից Բեշ-շէէ կայանելու համար, որ շինած էր մագաղաթից և
պարունակում էր իւր մէջ երկ, օրինաց հետեւալ խօսքերը 22 սողի մէջ
զետեղած *), Աստուած զուրէ հեղինական Տրեան օտարութեան մէջ, իրան
տառող և քամահրող օտար շրջաններում, քաղաքներում և գիւղերում
չաշխատէր ուրիշի ուշադրութիւնը գրաւել իւր վերայ լայնելով իւր գրա-
պանակը (տեֆիլին) **) կամ երկայնելով իւր հանգերձի քղանցքը, (« եր-

(*) Մեղուզայի բովանդակութիւնը հետեւեալ խօսքերից եւ պատուէրներից էիք
կազմում. — ... Բայց դուք, որ յորեցայք ի Տէր Աստուած ձեր կենդանի էք դուք
ամենեքեան յաւուրս յայտնի, Տեսէք, զի ուսուցի ձեզ զիրաւունս եւ զդատա-
տանս, որպէս պատուիրեաց ինձ Տէր անուել զայն յերկրին, յորում դուք մտանի-
ցէք ժառանգել զնա, եւ պահեռիք եւ տրտալիք, զի այն է իմաստութիւն ձեր
եւ հանձար առաջի ամենայն ազգացն, որ լսիցեն զամենայն իրաւունս զպարտիկ եւ
տիրեն, ահա ժողովուրդ իմաստուն եւ հանձարեղ ազգս այս մեծ, քանզի նմ իցէ
ազգ մեծ, որպի իցէ Աստուած մօտ ի նոսա, որպէս Տէր Աստուած մեր յամենայնի,
որովք կարգաւորեք առ նա, եւ նր ազգ մեծ՝ որպի իցեն իրաւունք եւ դատատարնք
արդարք, ըստ ամենայնի իրաւանցոյ պայտիկ, զոր ես տամ պարտ առաջի ձերս,
... եւ եթէ լսելով լսիցես ամենայն պատուիրանաց նորս, զոր ես պատուիրեմ
քեզ պարտ՝ սիրել զՏէր Աստուած քո եւ պաշտել զնա յամենայն սրտէ քումմէ եւ
յամենայն անձնէ քումմէ, տացէ անձրեւ յերկրին ձերում ի ժամանակի իւրում
զկանախ եւ զանագան, եւ ժողովեսցես զցորեան քո եւ զգինի քո եւ զելզ քո եւ
տացէ խոտ յանդս քո անասնոյ քում, եւ կերիցիս եւ յագեցցիս, Հայեցարութ յան-
ձինս ձեր, դուցէ յաւանայցեն սիրտք ձեր եւ յանցանիցէք եւ պաշտիցէք դաս-
տուածս օտարս եւ երկիր պագանիցէք նոցա, եւ սրամտեալ բարկանայցէ Տէր ի վե-
րայ ձեր եւ արգելուցու զերկրին՝ եւ ոչ լինիցի անձրեւ եւ երկր ոչ տացէ զպտուղ
իւր եւ կորնչիւրք արագ արագ յերկրէն բարութեան, զոր ես ձեզ Տէր, եւ գիշիք
զբանս զայս ի սիրտս ձեր եւ յանձինս ձեր եւ արիջիք զնոսա նշանս ի ձեռս ձեր եւ
եղիցին անշարժ առաջի աչաց ձերոց, եւ ուսուցիք արդւոց ձերոց խօսիլ զնոսա ի
նոսել ի տան, ի գնալ ի ճանապարհի, եւ ի ննջել, եւ ի յառնել, եւ գրեւիք զնոսա
ի վերայ սեմոց տանց ձերոց եւ ի դրաւնս ձերս... » (Երկ. Որին. գլ. Գ. 4—9 եւ գլ.
ԺԱ. 13—21):

(**) Տեֆիլին բառը դուրս է եկել եբրայեցոց տեֆիլա բառից, որ նշանակում է
աղօթք, տեֆիլինը նեղ ժապաւեն էր, որ աղօթելուց առաջ եբրայեցիք փաթա-
թում էին գլուխներին եւ ձախ թեւերի վերայ, Տեֆիլինն աւետարանի մէջ թարգ-
մանած է գրապանակ (... եւ զամենայն գործս իւրեանց առնեն իցցցս մարդկան,
լայնեն զգրապանակս իւրեանց...), Գրապանակը կազմում էին Եւրո խօսքերից...

կային զբղանցս հանդերձից (ւրեանց) և կամ ցոյց տալով հանդերձի քղանցքի վերայի ծողը, երկը (շէշէ)։ Շատ հաւանական է, որ այս բոլոր ծէսերը այն ժամանակ ամեն հրէի համար մինչև անգամ պարտաւորական էլ չէին համարվում։ Գոնէ դոցա մասին չեն յիշում հեթանոս մատենագիրները։ Առաջման ծէսը նորա անյարմարութեան պատճառով երբեմն ծածուկ կատարուէին և երբեմն—ոչ։ Բայց, որպէս տեսնում ենք, այն տեղերում, ուր կային գոնէ տասն տանուտէր արական սեռից, որ կարող էին իւրեանց ողատ ժամերը նուիրել կանոնաւոր պաշտօն մատուցանելու, «յազգացն առաջնոց» ունէին մի մի ժողովարան, երբեմն էլ մի քանիօր։ Ուր չը կ'յին ժողովարաններ, այնտեղ էլ բացօթեայ ժողովատեղիներ կային, որ շինուած էին թատրոնի նման և սովորաբար գտնվում էին քաղաքից դուրս գետի կամ ծովի ափերին լուացման ծէսը կատարելու համար։ (Յաւուրն շարաթու ելաք արտաքոյ քաղաքին առ գետափն։ ուր համարէր աղօթս մատուցանել)։ Այս տեղերն, ինչպէս ասում են դասական մատենագիրները, լաւ յայտնի էին հեթանոսներին և ուր յաճախ այցելուէին հեթանոսները։ Շարաթու սուրբ պահելը, հինգշաբթի աւուր պահքը, նոցա ողորմութեան օրը, նոցա կերակրին վերաբերեալ կանոնները, նոցա ուխտագնացութիւնն Արուսաղէմ—այս ամենը շարժումէն հրէացած հեթանոսների կարեկցութիւնը, որոնք մինչև անգամ քուն չէին մտնում, որ տեսնեն, թէ ի՞նչպէս է վառվում շարաթական զամբարը և սկսվում այն հանդիսաւոր աղօթքի ընթերցումը, որ յայտնուէր շարաթի ժամանակը։ Ժողովարանը հրէի համար ամբողջ աշխարհի մէջ համարվումէր միութեան

«Սրբեան դու ինձ դամենայն անդրանիկս նախճին» որ բռնոյ դամենայն արդանդի մէջ որդւոցն խորշիչի ի մտողոյ մինչև յանասուն քանդի իմ է։ Եւ առէ Սովսէս ցփողութեզն, յիշեալիք դօրս դայս՝ յորում ելէր յիշատակէ՝ ի տանէ ծառայութեան։ զի հզօր ձեռամբ եհան զձեզ Տէր սասի։ Եւ ոչ ստիցէք խմրուն, զի յայժմ աւուր ելէք դուք յամենան կանխոց։ Եւ եղիցի՝ յորժամ եթէ տանիցի զքեզ Տէր Ստուած քո յերկրին Քանանացւոց, եւ Գետացւոց, եւ Սովուհացւոց, եւ Խեւացւոց, եւ Յեբուսացւոց, եւ Փերիզացւոց, եւ Գերգեսացւոց, զոր երգուաւ հարցն քոց տու քեզ՝ երկիր՝ որ բոխէ զկաթն եւ զմեղր, եւ արացես զպաշտօնս զայս յամենան յայսմիկ, Զեօթն օր բազարջ կերիջիք եւ յաւուրն եօթներորդի տօն Տեառն։ Բազարջ կերիջիք՝ զեօթն օր ոչ երեւոցի առ քեզ խմրուն եւ ոչ եղիցի խմր յամենայն սոսմանս քո։ Եւ պատմեցես որդւոյ քում յաւուր յայսմիկ եւ տառցես, վասն այնորիկ արար ինձ Տէր Ստուած, մինչ ելանէի յիշատակէ։ Եւ եղիցի քեզ Ելան ի շնոթ քում եւ յիշատակ տալի ալաց քոց, զի լինցին օրէնք Տեառն ի բերան քում, զի հզօր ձեռամբ եհան զքեզ Տէր յիշատակէ...» (Եւ. Ճ. Գ. Տ—10)։ Կաեւ աւելացնումէին մի եւ նոյն գլխի 14—16 համարները, որ համարեն մի եւ նոյն բանն է բովանդակում իւր մէջ, Երբեմն դորան միացնումէին եւ այն խօսքերը, որ գրուած էին մեղուգանքի մէջ եւ որ գնումէին տան վերայ եւ կայնումէին դռների սեմոյ վերայ։ Եւ սյդ անումէին թուոց եւ երկ. Որին հրամայեալ են երկ կատարելու համար (Տեա թիւ Ժ. 37 մինչև վերջը. Երկ. Որին. Ի. 12)։

օղ: Շարաթը և տան օրերում նոքա ժողովումէին այնտեղ, որ լսեն այն Ս. Գիրքը, որ կարգումէին նոցա եղբայրները ամբողջ աշխարհի վերայ: Նոքա ժողովարան էին դնում, որպէս զի լսեն այն աստուածապաշտութեան փառարանական և մաղթողական խօսքերը, որ ընդհանուր էր համարվում ամենքի համար: որով նոքա կարծես մասնակցումէին այն հիասքանչ աստուածապաշտութեան և սպասահարկութեան, որ կատարվումէր Արուսաղէմի տաճարի մէջ: Գորանով նոքա ստանումէին Արուսաղէմեան տաճարի հիասքանչ աստուածապաշտութեան արձագանդը: Հեթանոսներն ապշումէին նոցա պաշտամունքը լսելիս և հիանումէին ժողովարանի ամենահեռաւոր և վարագուրուած ծայրում մթնութեան մէջ խորհրդաւոր լոյսը տեսնելիս, ուր երկիւղածութեամբ և յարգանք պահպանվումէին սուրբ խօսքերը: Օտար երկրացի հրէան իւր տունն ու տեղը, իւր երկրի կարգն ու կանոնը, իրան յայտնի պաշտամունքն ու աղօթքը միայն այստեղ էր տեսնում, այստեղ էր գտնում: Շարաթական սեղանի շուրջը նորան հիւրընկալուող ջոյն էին մատուցանում, տուն և օթեւան էին առաջարկվում, այստեղից էին օգնութեան հասնում, երբ մէկը կարօտութեան մէջ էր լինում:

Ընդհանուր կենդրոնի մասին ունեցած հաւատն ու համոզմունքը հրէաների հոգու մէջ ամենախոր արմատներ էին ձգել: Նոցա բոլոր զգացմունքներից ամենաազդեօրէն էր այն սիրոյ զգացմունքը, որ կապում էր նոցա Պաղեստինի և Արուսաղէմի հետ: Իսկ Արուսաղէմը համարվումէր քաղաք Աստուծոյ, ուրախութիւն ամենայն երկրի և փառք նորա Բարայէլեան ազգի: Այս էր պատճառը, որ հրէան միշտ մրմնջումէր. — «Եթէ մոռացայց զքեզ, Արուսաղէմ, մոռացի զիս աջ իմ, կցեսցի լեզու իմ ի քիմ իմ, թէ ո՛չ յիշեսցից զքեզ, թէ ո՛չ նախ նուագեսցից զքեզ, Արուսաղէմ, սկիզբն ուրախութեան իմոյ»: Հելլենականներն ու արեւելքի բնակիչները միահամուռ այդ էին դաւանում: — Ինչպէս որ հայրենի երկրի հողը, ազգի սիրագործութիւնները, պապերի գերեզմանը հետո աշխարհներ թափառող սկանդիտին ձգումեն դէպի մանկութեան օրրանը, կամ ինչպէս որ լեռնաբնակ ժողովրդի սիրան ու հողին լցվումէ անբացատրելի թափիծով, երբ նա հաւաքվումէ իւր տեղից, այնպէս էլ Սինագոգի մէջ լսուող ձայնը և կատարուող արարողութիւնները հրէին ձգում տանումէին իւր մայրենի երկիրը: Հրէի համար դա լոկ հաբենասիրութեան գործ չի համարվում կամ պատմական համարնակչութեան բացառիկ կանոն, այլ նա և կրօնական սկզբունքի գործ, հոգևոր գործ: որովհետև նորա հասկացողութեան համաձայն մարդ միայն Արուսաղէմում կարող էր Աստծուն ճշմարիտ երկրպագութիւն տալ, «Հարբն մեր ի լերինս յայսմիկ երկիր պագին, և դուք սաեք, եթէ Արուսաղէմ և եթէ տեղի, ուր արժան իցէ երկիր պագանել»: Ինչպէս որ Գանիէլն ի հնումն աղօթքի ժամերում երեսը դարձնումէր դէպի սուրբ քաղաքը, այնպէս էլ հրէան ժողովարանում աղօթքի կանգնած ժամանակ երեսը դարձնումէր Արուսաղէմին: Գիաւպորի մէջ գտնուած ժողովարանների ամեն մէկից իւրաքանչիւր տարի տուրքեր էին ուղարկվում Արուսաղէմի:

տաճարին և այդ տրոց մէջ շատ անգամ թանկագին ընծաներ էին գտնվում։ Համարեա ամեն քր, որ կարող էր մի կերպ ճանապարհածախս հայթայթել, կաշխատէր անպատճառ սուրբ քաղաքը գնալ որպէս զի մեծ տոններն այնտեղ անցնէ։ Փիլոնն ինքը, որ այդ կողմից ամենամոլեռանդ ռարբին էր համարվում, այն պատգամաւորներից մէկն էր, որոնց իւրեանց հայրենակիցներն ուղարկել էին մեծ տաճարում աղօթք և զոհ մատուցանելու։ Այս տեսակ փաստերին նայելով, պէտք է հաւատ ընծայել Յովսէփոսի խօսքերին, թէ մի քանի տօների ժամանակ Երուսաղէմի մէջ գտնուած մարդկանց թիւը 3 միլիոնի էր հասնում։

Ազգի ընդհանուր ակնկալութիւնը ամենազօրեղ օղակ ու կապ էր համարվում նոցա համար։ Այդ ակնկալութիւնը նոցա դարձնում էր Երուսաղէմ, ուր էլ որ գտնուէին նոքա։ Մեսիայի դալուստը զօրացնում էր Բսրայէլեան թագաւորութեան վերականգման յոյսը, որից առաջ պէտք է կատարուէր նոցա պանդուխտների և տարագրուածների վերադարձը։ Իւրաքանչիւր աստուածասէր հրէա ամենայն օր աղօթում էր. — « Զայն տուր Քո բարձրածայն փողով մեր փրկութեան մասին, բարձրացրու զրօշակ մեր պանդուխտները ժողովելու համար և ժողովիր մեզ երկրի շորս կողմից։ Օրնեալ եո, Տէր, և փառաւորեալ, Որ ժողովում ես քո Բսրայէլեան ազգի ապրողիւր անգամներին *)։ Այս աղօթքն ընդ հանրապէս իւր մէջ էր բովանդակում նաև կորուսեալ տասն ցեղերի համար բարեմաղթութիւնք։ Մարգարէական այս խօսքերը, թէ՛ « թոիցն եկեացն իբրև զհաւ յԱգիպտոսէ » հին Բսրայէլին էր վերաբերում, իսկ « և իբրև զաղանիս յերկրէն Ասորեստանեայց » խօսքերը — տասն ցեղերին, որոց համար ասումէ Տէրը, — « Եւ պատշապարեցուցից զնոսա ի տունս իւրեանց »։ Ուրեմն այդ քանիկար ժամանակ տարագրուած պանդուխտներն անգամ Քարի Հովուի փարախը մտնելու յոյսն ու ակնկալութիւնն ունէին։

Ուշադրութեան արժանի է այն թէ ի՞նչպէս ամենայն տեղ, թէ՛ արևելեան և թէ՛ արևմտեան հրէաների մէջ, այս յոյսը հաստատուն էր, և նոքա հաւատացած էին, որ մի օր բոլոր Բսրայէլը պէտք է վերադառնայ իւր սեպհական երկիրը։ Թալմուդը շեշտելով մատնացոյց է անում այդ բանը։ Անկասկած գեղեցիկ միտք էր Բսրայէլին ձիթենի ծառին նմանեցնելը, որ իւր տերեւները չի մերկանում։ Փորձութեանց մրրիկներն ու փոթորիկները, որոնք իբրև պատուհաս թափվումէին նոցա գլխին, ա՛յ թէ նորա համար էին, որ բոլորովին աւերեն ու ոչնչացնեն, այլ նորա համար, որ մտքրեն ու սրբին նոցա։ Իսկ հալածանքներն այն օգուտն ունէին, որ Բսրայէլեան ազգին հեռի էին պահում հեթանոսներին խառնուելուց, նորա վերջնական ազատութիւնն ըստ ամենայնի պէտք է զերազանցէր Եգիպտական հրաշալի ազա-

(*) Ամենօրեայ աղօթքների մէջ պարունակուած 19 օրհնաբանութիւններից տասներորդն է աս. Այդ օրհնաբանութեանց Ա. ը եւ վերջին երեքը շատ հին են. այս թ. - ն էլ իւր սկիզբն աւանդւում է Արուստղէմի ավերակելուց առաջ։

տուժիւնից, Սաստիկ հողմը պէտքէ վաչէր և նժգեհներին ի մի ժողովէր, և եթէ ամենահեռաւոր երկրի մէջ մի որ և իցէ Իսրայէլացի գտնուէր, նորան էլ պէտքէ վերադարձնէր: Ազգք և ազինք պէտքէ վերադարձնէին նոցա լի փառքով ու պատուով: Նահապետներն ու բոլոր արդարները յարուժիւն պէտքէ առնէին, որ մասնակցէին իւրեանց երկրի ի նորոյ տիրապետելու և ժառանգելու ուրախութեանն ու խրախճանին: Նոր փառաբանական երգեր պէտքէ յօրինուէին, որ հին երգաբանութեան հետ միացնելով փառաբանեն և վերերգեն Աստուծոյ: Երկրի սահմաններն այնպէս պէտքէ ընդարձակուէին, որ անցնէին երբ և իցէ եղած սահմաններից և այնքան մեծ և ընդարձակ լինէին, որքան որ Աստուած կանխապէս խօստացել էր Արրահամին: Իւրեանց սեպհական և տիրապետած երկրները նոցա ձեռքից երբէք չը պէտքէ կորզուէին, այնպէս՝ որպէս նոցա ուրախութիւնը չը պէտքէ փոխուէր լաց ու կոծի: Եթէ աչքի առաջ սենեանք նոցա ակնկալութիւնը, որ ընդհանրացած էր բոլոր հրէաների մէջ, էլ չը պէտքէ դարմանանք առաքելոսների՝ Յիսուս Քրիստոսին առաջարկած հարցի վերայ թէ՝ «Տէր, ի ժամանակի աստ յայսմիկ հասուցանելոց իցես զարքայութիւն Իսրայէլի»:

Միայն Թաւմուզական գրութեանց մէջ չէ արտայայտուած այս յոյսը, այս ակնկալութիւնը, այլ ամբողջ ապոերիֆական (թագուցեայ) գրականութեան մէջ: Ենովքի դրքի հեղինակն ասումէ, թէ Իսրայէլացիները Մեսիայի ժամանակ արեւելքից, արեւմտքից և հարաւից կառքերով պէտքէ արշաւեն և հողմաց թեւերի վերայ սլանան: Հրէից պատգամախօսութիւնն աւելի լիակատար մանրամասնութեամբ է խօսում՝ այդ բախտաւոր անցքերի վերայ: Նա իւր ճառերի մէջ Մեսիայի գալուստը, տաճարի վերականգնումն ու նժգեհների վերադարձը միացնումէ և ասում, թէ բոլոր ազգերն էլ իւրեանց հարստութիւնը պէտքէ բերեն լցնեն Աստուծոյ տունը: Մի դար յետոյ այդ յոյսն աւելի պարզ և որոշ յայտնուեցաւ ոչնչպէս անուանեալ «Առդոմնի Սաղմոսի» մէջ: Սորա եօթնութեաներորդ սաղմոսը հետեւեալն է ասում. — «Օրհնուած են նոքա, որոնք կեանք կունենան այն օրերում, երբ կը վերականգնեն Աստուծոյ ժողոված ցեղերը»: Այդ այն օրերն են, երբ թագաւորը, Պաւթի որդին՝ Երուսաղէմը մաքրելով և հեթանոսներին իւր քարոզութիւններով և վարդապետութիւններով ջնջելով և ի չիք դարձնելով, կը միացնէ ընտրեալ և սուրբ ազգի բաժանուած անդամներին, կսկսէ կառավարել նորան արքայութեամբ, դատել Իւր ազգն իրաւամբ, և էլիք մէջ նոցա կը բաժանէ առանձին առանձին ցեղերի, — այդ այն օրերը վերջինին, երբ նոցա մէջ ոչ մի օտար երկրացի չի լինել»:

Այդ կարծիքների ընդհանրացած ժամանակից մի որոշեալ միջոց անցնելուց յետոյ՝ մենք հասնումենք այն ժամանակին, երբ յայտնուեցաւ Յիսուս Մեսիան: Յորեկանի գիրքը, որ իւր սկիզբն առնումէ այդ ժամանակամիջոցից, ասումէ, թէ՝ չընայելով այն տարագրութեանը, որին Իսրայէլացիք ենթարկուած էին իւրեանց ամբարշտութեան պատճառաւ, այնուամենայնիւ Աստուած պէտքէ նոցա բոլորին ժողովէ հեթանոսների միջից և

նոցա հետ բնակուի. պէտքէ շինէ իւր տաճարը, որ յաւիտեան մնալու է. Աստուած կը յայտնուի ամենքին և ամեն ոք կիմանայ, որ Նա է Իսրայէլի Աստուածը. Յակոբի որդւոց Հայրը և Սիօնի թագաւորը, իսկ Սիօնն ու Լերուսաղէմը պէտքէ սուրբ մնան. Եթէ ուշադրութիւն դարձնենք այս ձայնի վերայ, որ շատ կարելի է թէ Յիսուս Քրիստոսին ժամանակակից մէկն է ասել, կարող ենք հասկանալ, թէ ինչո՞ւ համար հրէաները զայրացան, երբ լսեցին, որ Նազարէթցի Յիսուսը առաջարկել է քանդել իւրեանց սիրելի տաճարը, ասելով, — Քակեցէք զտաճարդ զայդ, և զերիս աւուրս կանգնեցից զդա. (Յովհ. Բ. 19.) *):

Ըստ Փիլոնի՝ Իսրայէլէն ինչքան էլ ստորանկեալ զրութեան մէջ լինէր և երկրագնդի վերայ սփռուած, այնու ամենայնիւ նշանը տալուն պէս՝ մի աւուր մէջ պէտքէ ազատուէր. Նա ասումէ, թէ այս հրաշայի անցքը տեղի կունենայ այն ժամանակ, երբ Իսրայէլէն իւր առաքինի զօրներով ամօթահար կանէ գերեզմաններին, և վերջիններս կզգան, որ իրանք արժանի չեն ստրկութեան մէջ պահելու նոցա, որոնք իրանցից անհամեմատ բարձր են. Յետոյ այդ պանդուխտները միանալով՝ դարձ կառնեն Ելլադայից, բարբարոսների երկրից, կզգնենրից ու ցամաքից. Նոցա կառաջնորդէ աստուածութիւնը, գերմարդկային յայանութիւնը, որ այլոց անտեսանելի, իսկ իրանց տեսանելի կը լինի. Պաղեստին դաւանալուց յետոյ՝ աւերուած տեղերն ու անապատները մարդիկ կը բնակին, անպտուղ, խոպանացած հողը բարեկեր և որդաւէտ կը լինի:

Չանագան հայեացքների մէջ ինչպիսի տարբերութիւնք էլ որ գտնենք, սակայն պէտքէ ասել, որ Նորա բոլորն էլ նախատեսում էին հրէաների ազատութիւնը, նոցա վերականգնումը, ապագայի փառքը, և ամենքն էլ այս անցքերը կապումէին Մեսիայի գալստեան հետ. Երկոտասան ցեղերը որ զօր ու զիշեր ծառայում էին, չը նայելով նոցա ցաւալի վիճակին և կրած հալածանքին, յոյս ունէին այդ «աւետեացն» հասնել, ինչպէս Պօղոս առաքեալն ասումէ Ագրիպաս արքային. «Վասն յուսոյն առ հարսն եղելոյ աւետեացն յԱստուծոյ՝ դատեալ կամ յատենի, յոր երկոտասան ազգատոհմիս մերոյ անպակաս զցայգ և զցերեկ պաշտեալ ակն ունին հասանել, վասն որոյ յուսոյ ամբաստանիմ, արքայ, ի հրէիցդ»: Այս յայտնի մարգարէական բանին օտար երկրացի պանդուխտներն ունէին էին գնում, որով հետեւ դա նոցա համար խաւարի մէջ դրած մի լուսատու ճրագ էր, մինչև որ օրը բացուէր և արուսեակը փայլէր նոցա սրտի մէջ, ինչպէս ասումէ Պետրոս առաքեալը. «Եւ ունիմք հաստատագրոյն զբանն մարգարէական, որում եթէ անսայցէք, բարւո՞ք առնէք, իրբե ճրագի, որ տայցէ լոյս ի

(*) Տիրոջ ողբ խոսքերի փոխաբերական միտքը բոլոր քրիստոնէսներին յայտնի պէտքէ լինի ի հարկէ:

խաւարչտին տեղւոջ մինչև տիւն լուսաւորեսցէ և արուսեալն ծագեսցէ ի սիրտս ձեր ։ Այդ աւետումը նոցա մէջ ներշնչումէր աւտուածպաշտութեան ոգի, նեղութեանց մէջ համբերութիւն, արգելումէր նոցա շրջապատող ազդերին խռնուելուց և ուղղում նոցա սիրտն ու մտքն յերուսաղէմ, որովհետև Երուսաղէմը բոլորի մայրն էր և ամեն ինչ գերազանցում էր, Նորա նախատեսում էին, որ մի քիչ ժամանակ անցնելուց յետոյ՝ չի յամիլ, կը գայ, Ար հանդերձեալ էր զալ և այն ժամանակ նորա կօրհնուին և կը փառաւորուին, Ամեն մի վայրկեան սպասում էին, որ նոցա աւետիք կը տան, թէ Նա եկել է արդէն, և իրանց փառքը փայլելու է երկրնքի մի ծայրից մինչև միւսը, Նորա գալստեան բոլոր նշաններն արդէն կատարուել էին, նորա մտածումէին, թէ գոցէ Օծեալն եկել է արդէն և միայն այն ժամանակ կը յայտնուի, երբ Եսայէի ապաշխարութեան ձայնը դուրս կը կանչէ Նորան իւր միայնութեան վայրից, Նորա մտածումէին, թէ յանկարծ կարող է նորա գրօշը ծածանել լեռների բարձրութեանց վերայ, փայլել Նորա սուրբ, փշիլ Նորա փողը, վասն որոյ իւրեանց կապն Երուսաղէմի հետ հարկաւոր էր ամրացնել, որովհետև մերձ էր իւրեանց փրկութիւնը, պէտքէ իւրեանց փափաղն ու եռանդն աւելի քերմ լինէր և իրանք արթուն, մինչև որ ի վաղուց հետէ ակնկալեալ աւուր արշալոյսն իւր ճառագայթներով լուսաւորէր արեւելեան երկնակամարը *) :

(Թ-ԸԶ)

Մեսրոպ Բաշանայ Գեօնջեանց :

(*) Ասկայն հրէաները չարժանացան սյգ փառքին, որովհետեւ Բանն Աստուած, Նոյն ճշմարտ Եկուս Գրեատոս « յիւրսն եկն, եւ իւրն զնա ոչ ընկաւան, իսկ որք ընկաւանն զՆոյ, եւ նոցա լշխանութիւն որդիս Աստուծոյ լինիլ, որոց հաւատացեան յաւուն Նսրա » : (Յով. Ա. 11-12) :